



**ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ**

Կրթական քաղաքացիական նախաձեռնությունը (ԿՔՆ) 2017թ. ապրիլին ձևավորված բաց հարթակ է կրթության ոլորտի բոլոր շահառուների համար: 2017թ. ապրիլ ամսից սկսած ԿՔՆ-ն նախաձեռնել է մի շարք քաղաքացիական ժողովներ և փորձագիտական քննարկումներ, ինչպես նաև ուսումնասիրություններ է կատարել կրթության ոլորտին և կրթական քաղաքականությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ: Նախաձեռնությունն առաջնահերթ է համարում կրթական համակրգում հետևյալ սկզբունքների ապահովումը.

- Կրթության իրավունք
- Սոցիալական արդարություն
- Մասնակցություն
- Քննադատական մտածողություն

Առաջնորդվելով այս սկզբունքներով և հիմնվելով ԿՔՆ անդամ կազմակերպությունների, անհատ փորձագետների և քաղաքացիների փորձի, գիտելիքի ու հետազոտությունների վրա՝ ԿՔՆ-ն ձևավորել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացնում է նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանին և իր թիմին՝ պահանջելով, որ այդ առաջարկություններն ընկնեն Կառավարության ծրագրի հիմքում: Սույն փաթեթը նախատեսում է մեկ տարվա կտրվածքով իրականացվող գործողությունների շարք, բաժանված առաջնահերթ կարճաժամկետ գործողությունների (2 ամիս) և երկարաժամկետ գործողությունների (10 ամիս):

Պահանջում ենք, որ Կառավարության ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում երաշխավորվի մասնակցայնության սկզբունքի ապահովումը, այն է՝ բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ բոլոր խմբերի երեխաների (ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող, գյուղաբնակ, ազգային և էթնիկ փոքրամասնություններ ներկայացնող և այլ խմբերի), ծնողների և խնամակալների, ուսուցիչների, կրթության ոլորտի անհատ փորձագետների, կրթության ոլորտի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների և միավորումների գործունյա մասնակցությունը:

Ըստ առաջնահերթության՝ առաջարկությունները բաժանել ենք երկու մասի.

1. Առաջնահերթ փոփոխություններ, որոնք պետք է կատարել առաջիկա 1-2 ամիսների ընթացքում,
2. Փոփոխություններ, որոնք պետք է կատարել առաջնահերթ փոփոխություններն իրականացնելուց հետո:

Բաժին 1. Առաջնահերթ փոփոխություններ (2 ամիս)

Առաջնահերթ փոփոխությունները նախաձեռնության կողմից առանձնացված այն առաջարկություններն են, որոնք անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ համակարգի հետագա աշխատանքի արդյունավետ իրականացումն ապահովելու, ինչպես նաև խարխված սոցիալական արդարությունը վերականգնելու հիմքերը դնելու համար:

Առաջնորդվելով սոցիալական արդարության և կրթության իրավունքի սկզբունքներով՝ նախաձեռնությունը պահանջում է, որ կառավարությունն անհապաղ քայլեր ձեռնարկի կրթության ոլորտում սոցիալական արդարությունը վերականգնելու ուղղությամբ: Սոցիալական անհավասարությունը որակյալ կրթություն ստանալու ճանապարհին եղած ամենամեծ խոչընդոտն է: Ամենաաղքատ քվինտիլի բնակչության ծախսը կրթության ոլորտի ծառայությունների վրա 19 անգամ գիջում է միջին մակարդակին: Բարձրագույն կրթական հաստատություններում ոչ աղքատ տնային տնտեսությունների համախառն ընդգրկվածությունը կազմել է 50%, աղքատ տնային տնտեսություններինը՝ 34% եւ ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններինը՝ 17%: Հանրակրթության մեջ այս անհավասարությունը առավելապես տեսանելի է նաև կրթության ծախսերի կառուցվածքից:

1.1 Անհապաղ իրականացվող գործողություններ

Կրթության ոլորտի համակարգային բարեփոխման հրամայականից ելնելով, պահանջում ենք անհապաղ իրականացնել հետևյալ քայլերը՝

ա/ Իրեն ոլորտային քաղաքականության կառուցման հենակետ ամրագրել կրթության իրավունքահեն և սոցիալական արդարության մոտեցումները:

Չուտ կրթական համակարգի, կամ դպրոցների առկայությունը դեռ բավարար չէ պետության կողմից՝ քաղաքացիների կրթության իրավունքի ապահովման համար: Ուստի պահանջում ենք, որպեսզի պետությունը որդեգրի կրթական համակարգի կառուցման իրավունքահեն մոտեցում:

ՄԱԿ-ի կողմից ամրագրված այս մոտեցումը ենթադրում է, որ

- **կրթությունը պետք է լինի մատչելի յուրաքանչյուրի համար**, այսինքն, յուրաքանչյուր երեխան ունի կրթության իրավունք, որի իրացման համար պետք է ապահովվի կրթության ինչպես աշխահրագական/ֆիզիկական մատչելիությունը, այնպես էլ սոցիալական և մշակութային մատչելիությունը:
- **կրթությունը պետք է լինի որակյալ**, այսինքն յուրաքանչյուր երեխա ունի իրավունք ստանալու այնպիսի կրթություն, որը նրան հնարավորություն կտա լիարժեք կերպով բացահայտել իր ներուժը, զարգացնել ամենազանազան կարողությունները, դարձնել մրցունակ աշխատաշուկայում:
- **կրթությունը պետք է լինի երեխայակենտրոն**, ներառի գիտելիքի մատուցման լայն մեթոդաբանություն, կարևորի յուրաքանչյուր երեխայի անհատականությունը և անհատական կարիքները:
- **կրթական մթնոլորտը պետք է կառուցված լինի հավասարության, սոցիալական արդարության և անձի արժանապատվության պատշապանության և բռնության բացառման սկզբունքների** վրա, այսինքն յուրաքանչյուր երեխա ունի իրավունք սովորելու այնպիսի կրթական մթնոլորտում, որտեղ նրա արժանապատվությունն ու իրավունքները պաշտպանված են, որտեղ տիրում խտրականությունից և բռնությունից զերծ միջավայր:

բ/ Մեծացնել կրթական բյուջեի մասնաբաժինը:

Պահանջում ենք վերանայել պետական միջնաժամակետ ծախսերի ծրագիրը և կրթության ֆինանսավորման թիրախ սահմանել ՀՆԱ-ի 3 %-ը, ինչպես նաև երկարաժամկետ թիրախ սահմանել 4.5 %-ը:

- **Սոցիալական և իրավական հիմնավորում.** Կրթության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է (ՀՀ Սահմանադրություն, հոդված 38): Կրթության իրավունքի լիարժեք իրացումը այն կարևոր մեխանիզմն է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անհատին, երեխային ոչ միայն կրթվել և զարգանալ, այլև խուսափել մի շարք շահագործումներից, մանկական աշխատանքից և ամենակարևորը զգալիորեն նվազեցնել արդեն հասուն տարիքում աղքատության մեջ հայտնվելու ռիսկերը, իսկ այն երեխաների համար, ովքեր արդեն իսկ ապրում են աղքատ ընտանիքներում՝ հաղթահարել աղքատությունը և կոտրել, այսպես կոչված՝ «աղքատության շղթան»: Հայաստանում բնակչության 30%-ն աղքատ է, իսկ մանկական աղքատությունը կազմում է 34%, ընդ որում ծայրահեղ աղքատության մեջ ապրում են մինչև 18 տարեկան երեխաների 2.5%-ը: Պետության կողմից աղքատության և հատկապես մանկական աղքատության հաղթահարումը չի կարող իրականացվել առանց յուրաքանչյուր անհատի և երեխայի՝ կրթության իրավունքի լիարժեք իրացման, յուրաքանչյուրի համար մատչելի և որակյալ կրթության հավասար հնարավորությունների ապահովման: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի, տարրական և ցածր կրթություն ունեցողներից 2015թ.-ին 61%-ն աղքատ է եղել, և այս թիվը աճել է 2010թ.-ի 45%-ի նկատմամբ: Իսկ, օրինակ, միջնակարգ կրթություն ստացածների ցուցանիշը 2010թ.-ի 44%-ից 2015թ.-ին նվազել է դառնալով 35%: Ակնհայտ է, որ կրթության բարձր մակարդակը դրականորեն է ազդում անհատի աղքատության մակարդակը հաղթահարելու վրա:
- **Տնտեսական հիմնավորում.** Առկա ժողովրդագրական անկման պայմաններում անհրաժեշտ է ոչ թե իջեցնել, այլ բարձրացնել առանձին քաղաքացու արտադրողականության աճ ապահովող գլխավոր ներդրումը՝ կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված պետական ծախսերը:

1.1. Կրթության ֆինանսավորմանն առնչվող առաջարկություններ

Պահանջելով փոխել միջնաժամակետ ծրագիրը և կրթության ֆինանսավորման թիրախ սահմանել ՀՆԱ-ի 3 տոկոսը, ինչպես նաև երկարաժամկետ թիրախ սահմանել 4.5 տոկոսը, առաջարկում ենք կրթության ավելացված ծախսը ուղղել ուսուցիչների աշխատավարձերի բարձրացմանը, միջոցներ հատկացնել ՀՀ-ում մանկապարտեզների անվճար ապահովմանը, ինչպես նաև որակական չափանիշներ ներառել ֆինանսական նոր հոսքերի համար:

1.2.1.Ապահովել անվճար մանկապարտեզների հասանելիությունը ամբողջ երկրի տարածքում՝ հաղթահարելով Երևան/մարզեր սոցիալական խզումը և այդպիսով ապահովել կանանց՝ հատկապես մարզերում, աշխատաշուկա վերադառնալու հնարավորությունը:

Մարզերում անվճար մանկապարտեզների ապահովումը պետական բյուջեի տեսանկյունից լիովին իրատեսական նպատակ է: Այն նաև կլինի ակտիվ և ոչ միայն պասիվ սոցիալական քաղաքականության դրսևորում՝ բարելավելով երեխաների կրթական գործընթացի շարունակականությունն ու միաժամանակ նպաստելով կանանց և գյուղական ընտանիքների տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը:

Ուստի պահանջում ենք ՀՀ ամբողջ տարածքում անվճար մանկապարտեզների ապահովում պետական ֆինանսավորման համապատասխան ձևաչափի ընտրության միջոցով՝ մարզերի և Երևանի ծայրահեղ սոցիալական խզումը հաղթահարելու և տնտեսական լրացուցիչ խթան ստեղծելու նպատակով: Այս բարեփոխումը հնարավոր է իրականացնել երկու փուլով.

ա) առաջիկա մեկ ամսում պետական դոտացիայի միջոցով անվճար դարձնել մարզերում գործող բոլոր պետական մանկապարտեզները,

բ) առաջիկա մեկ տարում նախադպրոցական կրթությունը հասանելի դարձնել ՀՀ նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների համար՝ ապահովելով անհրաժեշտ շենքային և այլ պայմաններով:

1.2.2. Կրթության ոլորտի ֆինանսավորման բարձրացմանը զուգահեռ, սահմանել մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն կրթությանը հատկացված ֆինանսական միջոցների կառուցվածքում փոփոխություններ և վերաբաշխումներ, որպեսզի ֆինանսապես երկարաժամկետ կտրվածքով հնարավոր լինի.

ա) Բարձրացնել ուսուցիչների աշխատավարձերը, ապահովել ուսուցիչների աշխատանքային իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Ներկայումս ուսուցիչները Հայաստանի Հանրապետության ամենացածր վարձատրվող մասնագետներն են: Լայնորեն խախտվում են նաև ուսուցիչների աշխատանքային իրավունքները: Պահանջում ենք, որ պետությունը ուսուցիչների աշխատանքային իրավունքների լիարժեք պաշտպանության գործունե քաղաքականություն ստեղծի: Մա կլուծի կրթական համակարգի մի շարք խնդիրներ, այդ թվում՝ կրկնուսուցման պրակտիկաները, լրացուցիչ կոռուպցիոն երևույթներն ու վարչական կամակայականությունները:

բ) Ապահովել անվճար նախադպրոցական կրթություն՝ հաղթահարելով Երևան/մարզեր սոցիալական խզումը, ապահովել նախակրթարանների պատշաճ շենքային պայմանները (մանրամասն, տես՝ 1.1.):

գ) Ապահովել հանրակրթական ուսումնական հաստատությունների պատշաճ շենքային և սանիտարահիգիենիկ պայմանները, երաշխավորել հանրակրթարանների լիարժեք ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Անհրաժեշտ է կապիտալ ներդրումներ կատարելով ՀՀ դպրոցներում հիմնանորոգման և արդիականացման նպատակով՝ կենտրոնանալով մարզային դպրոցների վրա և պահպանելով սոցիալական արդարության սկզբունքը: Պահանջում ենք նաև ապահովել դպրոցների լիարժեք ֆիզիկական մատչելիությունը, դպրոցների շենքային պայմանները հարմարեցնել հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

դ) Ապահովել հանրակրթության հասանելիությունը բոլոր երեխաների համար, այդ թվում սոցիալապես անապահով երեխաների համար՝ երաշխավորելով յուրաքանչյուր երեխային կրթության իրավունքի իրացումը: Այս առումով անհրաժեշտ է.

- ստեղծել գործունե մեխանիզմներ, որոնց շնորհիվ նյութական աջակցություն կտրամադրվի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրացման համար,
- կարգավորել մանկական աշխատանքի հիմնախնդիրը՝ կրթության իրավունքի իրացման տեսանկյունից,
- երաշխավորել դասավանդման և ուսումնական բոլոր նյութերի, այդ թվում՝ դասագրքերի անվճար տրամադրումը երեխաներին,

- լուծել նախկինում հատուկ կրթական հաստատություններ հաճախող և այժմ ներառական ուսուցում իրականացնող դպրոցներ տեղափոխված երեխաների առջև ծառայած ֆինանսական խնդիրները:

ե) Հասկացումներ նախատեսել կրթության բովանդակության, դասագրքերի, դասավանդման մեթոդների արդիականացման համար: Հայաստանում հանրակրթության բովանդակությունը չի հիմնվում մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության սկզբունքների վրա: Կրթական բովանդակությունը հաճախ խտրական է: Ավելին, խտրական մոտեցումներով է իրականացվում դասապրոցներ, իսկ դասավանդողների մոտեցումները չեն հիմնվում սոցիալական արդարության պահպանման հրամայականի վրա: Պահանջում ենք վերանայել թե՛ դասագրքերը, և թե՛ դասավանդման մոտեցումներն ու մեթոդները՝ ապահովելով դրանց գաղափարական համապատասխանությունը ժողովրդավարական սկզբունքներին և բովանդակային համապատասխանությունը արագ առաջընթաց ապրող գիտատեխնիկական զարգացումներին:

1.2. Իրավական դաշտին առնչվող առաջարկություններ

- 1.3.1. Վերանայել «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը» այն կառուցելով ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրված կրթության իրավունքի դրույթների շուրջ և առաջնորդվելով ցկյանս ուսումնառության մոտեցումներով:
- 1.3.2. Բարձրագույն կրթության մասին օրենքի նախագիծը՝ ուղարկված լրամշակումների, կրկին դնել հանրային քննարկման՝ ներառելով քաղաքացիական հասարակության, ուսանողների, կրթության փորձագետների կողմից ներկայացված փոփոխությունների առաջարկությունները:
- 1.3.3. Չեղարկել «Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարությունը»:
- 1.3.4. Չեղարկել տարկետման տրամադրման իրավական կարգի փոփոխությունները:

1.4. Այլ առաջարկություններ

- 1.4.1. Դպրոցներից հանել կաթոլիկոսի կամ նախագահի նկարները: Փոխարենը դպրոցներին հնարավորություն ընձեռել սեփական ընտրությամբ փակցնելու ՀՀ սահմանադրության, դպրոցի կանոնադրության, Երեխայի իրավունքների կոնվենցիայի և նմանատիպ այլ փաստաթղթերի հատվածներ/կետեր:

Բաժին 2. Երկարաժամկետ կտրվածքով առաջարկվող փոփոխություններ (10 ամիս)

- 2.1. Վերանայել նախադպրոցական կրթության կազմակերպմանն առնչվող հիմնական փաստաթղթերն ու քաղաքականությունները՝ ներառելով հետևյալ պահանջները.**
 - 2.1.1. Հետևել, որ անվճար մանկապարտեզները հասանելի լինեն ամբողջ երկրի տարածքում:
 - 2.1.2. Նվազեցնել խմբասենյակում երեծաների թիվը՝ ավագ խմբում 20-25, վաղ տարիքի խմբերում 15-20: Որպեսզի սա սոցիալական լարվածություն չառաջացնի, կարելի

է գերբեռնված խմբերում համատեղ աշխատող երկրորդ դաստիարակի հաստիք ավելացնել:

- 2.1.3. Վերջապես իրականացնել դաստիարակների եվ տնօրենների որակավորման եվ տարակարգերի շնորհման հարցը և բացառել ոչ մասնագետ կադրերի մուտքը մանկապարտեզ:
- 2.1.4. Հետևել, որ մանկապարտեզներն իրական լիցենզավորում անցնեն և լրացուցիչ կրթական ծառայությունները չվերածվեն հիմնական գործառույթի՝ խոչընդոտելով կամ երկրորդ պլան մղելով երեխաների նախադպրոցական որակյալ կրթության կազմակերպումը:
- 2.1.5. Հետևել, որ վերապատրաստող կազմակերպությունները առաջնորդվեն միասնական մոտեցումներով եվ իրականացնեն պարբերական վերապատրաստումներ հանրապետության ողջ տարածքում:
- 2.1.6. Վերանայել աշխատավարձերը եվ սոց փաթեթի մեջ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին նույնպես ընդգրկել:

2.2. Վերանայել հանրակրթությանն առնչվող հիմնական փաստաթղթերն ու քաղաքականությունները՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները.

- 2.2.1. Մշակել և ներդնել կառավարման խորհուրդների ակտիվացմանն ուղղված մեխանիզմներ՝ այսպիսով խրախուսելով ժողովրդավարության իրականացումը դպրոցներում:
- 2.2.2. Փոփոխել և թեթևացնել հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերը՝ շեշտը դնելով ազատ կամարտահայտման, քննադատական մտածողության, նախաձեռնողականության և ստեղծագործականության զարգացման վրա: Ամբողջությամբ վերանայել Ավագ դպրոցների կրթական ծրագիրն ու բովանդակությունը: Դպրոցներից հանել Հայ եկեղեցու պատմություն առարկան՝ փոխարենը կամընտրական սկզբունքով ավելացնելով արվեստի պատմություն և/կամ այդ առարկայի դասաժամերի հաշվին ավելացնելով Ռազմագիտություն առարկայի ժամաքանակը՝ կենտրոնանալով պրակտիկ հմտությունների վրա:
- 2.2.3. Բարձրացնել առաջին դասարան ընդունվող երեխաների տարիքային շեմը և/կամ բացառել առաջին դասարանի երեխաների ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ շեշտը դնելով խաղային մեթոդների վրա:
- 2.2.4. Ուսուցիչներին վճարել ըստ կրթության որակի: Մրցակցության և մոտիվացման միջոցով կբարձրանա թե՛ կրթության որակը, թե՛ ուսուցիչների աշխատավարձը:
- 2.2.5. Բարձրացնել տեխնիկական սպասարկման աշխատակիցների (հատկապես մաքրուհիների) աշխատավարձերը՝ բացառելով դասասենյակների մաքրության համար կատարվող դրամահավաքչությունը:
- 2.2.6. Կրթական համակարգից հանել ամենօրյա գնահատումները: Ստեղծել բազա, որը հասանելի կլինի և՛ ծնողներին, և՛ ուսուցիչներին, և՛ աշակերտներին: Տվյալ բազայում ներառել տարբեր աստիճանների բարդության վարժություններ (օրինակ՝ մաթեմատիկայից) որտեղից ուսուցիչը կընտրի վաժություններ և թեստերի միջոցով վերջնական գնահատումները տեղի կունենան:
- 2.2.7. Ուսումնական հաստատությունների ֆինանսական հաշվետվողականության և ծախսերի թափանցիկության մեխանիզմներ կիրարկել, հատկապես դոնոր համայնքի և վարկային միջոցների պարագայում:
- 2.2.8. Փոքրացնել դասարաններում աշակերտների թիվը:

2.3. Վերանայել բարձրագույն կրթությանն առնչվող հիմնական փաստաթղթերն ու քաղաքականությունները՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները.

- 2.3.1. Ապահովել ակադեմիական ազատության և ազնվության իրականացումը ՀՀ բարձրագույն կրթության հաստատություններում:
- 2.3.2. Ապահովել բարձրագույն կրթության արդիականացումը և համապատասխանեցումը շուկայի պահանջներին:
- 2.3.3. Սահմանել իրավական կարգավորումներ բուհերում ուսանողական խորհուրդների՝ մասնավորապես ուսանողական խորհրդի նախագահի, ֆակուլտետների ՈԻԽ նախագահի կուսակցականացվածության բացարկյան հիմքով (ԵՊՀ օրինակով): Հիմքը՝ ԵՊՀ ՈԻԽ կանոնադրություն Կետ: 5.8 (ՈԻԽ նախագահ չի կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցությանը անդամակցող թեկնածու):
- 2.3.4. Լրամշակել բուհերի կառավարման մարմինների անդամների ընտրության չափանիշները:
- 2.3.5. Բարձրագույն կրթության հաստատությունների շենքային պայմանները հարմարեցնել հաշմանդամություն ունեցեղների համար, ապահովել կրթության բովանդակության մատչելիություն ու հասանելիություն ԿԱՊԿՈՒ ուսանողների համար:
- 2.3.6. Ապահովել դասախոսների գիտական աշխատանքների, ԱՌԻՄՓ փաթեթների հեղինակային իրավունքների պաշտպանությունը, (ակադեմիական ազնվություն և ազատություն):
- 2.3.7. Ներդնել և զարգացնել ուսանողների ու ակադեմիական անձնակազմի շարժունության խրախուսման մեխանիզմներ՝ ուժեղացնելով օտար լեզուներով դասավանդումը:
- 2.3.8. Նույնականացնել ուսանողական վարձավճարի համակարգը՝ քվոտաները բաշխելով բուհ-աշխատաշուկա-ուսանողի կարիք շրջափուլի հիման վրա:
- 2.3.9. Ներդնել և զարգացնել բուհերում առկա ցլյանս ուսումնառության մեխանիզմներն ու ծրագրերը:
- 2.3.10. Ապահովել բուհերում մասնագիտական ու ակադեմիական հայալեզու գրականության, ուսումնական նյութերի առկայությունը
- 2.3.11. Բովանդակության հասանելիությունն ապահովելու նպատակով էլ-գրադարանի /Էլեկտրոնային գրադարանի/ ձևավորում և շրջանառում, ուսանողներին անվճար ապահովում
- 2.3.12. Բուհերում կարիերայի կենտրոնների աշխատանքների վերակազմակերպում՝ շեշտադրում կատարելով աշխատաշուկա-գործատու-ուսանող-բուհ կապի ապահովմանն ուղղված աշխատանքների զարգացմանը
- 2.3.13. Ուսանողների պրակտիկաների կազմակերպման ընթացակարգերի փոփոխություններ՝ ներառելով իրենց մասնագիտությունների համապատասխան հաստատություններում երկարաժամկետ, պարբերական պրակտիկաների պլանավորում և իրականացում
- 2.3.14. Մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների բազմազանության ապահովում, հետազոտահետ մագիստրոսական կրթության կազմակերպում
- 2.3.15. Ուսումնաօժանդակ անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված ռազմավարության մշակում և իրականացում:

2.4. Բուհ ընդունելության գործող համակարգի բարելավում

- 2.4.1. Ընդունելության գործող համակարգի բարեփոխումները պետք է դիտարկել կրթական համակարգի բոլոր աստիճաններում որակի վերահսկողության փոխհամաձայնեցված մոտեցումների ներդրման համատեքստում: Առավել պետք է կարևորվեն կրթության յուրաքանչյուր աստիճանի էլքին, այլ ոչ՝ մուտքին ներկայացվող պահանջները:

- 2.4.2. Անհրաժեշտ է ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք հետադարձ դրական ազդեցություն կարող են ունենալ կրթության որակի վրա: Մասնավորապես, անհրաժեշտ է թեստերում ընտրովի և կարճ պատասխան պահանջող առաջադրանքների կրճատման հաշվին ավելացնել ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ, մշակել և ներդնել մասնագետների կողմից դրանց ստուգման օբյեկտիվ մեխանիզմներ: Անհրաժեշտ է նաև շարունակել առաջադրանքների բանկի կատարելագործումը՝ բաց ներկայացնելով դրա միայն մի մասը: Նման մոտեցումը ներկայումս առկա է շատ երկրներում:
- 2.4.3. Անհրաժեշտ են ուսումնասիրություններ ՀՀ բուհեր դիմորդների թվի նվազման վրա տարբեր գործոնների ազդեցության աստիճանը պարզելու համար: Չպետք է ստեղծել արհեստական խոչընդոտներ՝ կանխելու դիմորդների հոսքը Հայաստանում գործող արտասահմանյան բուհեր: Առողջ մրցակցային դաշտի ապահովումը կարող է խթանել ՀՀ պետական բուհերի հզորացումը: Կրթության ոլորտի քաղաքականությունը մշակողներին ոչ միայն չպետք է անհանգստացնի բուհ դիմորդների քանակի նվազումը՝ ի հաշիվ միջին մասնագիտական հաստատություններ դիմորդների, այլև պետք խրախուսվի պետության կողմից՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ:
- 2.4.4. Անհրաժեշտ է դպրոցի, միջին մասնագիտական հաստատության և բուհի կողմից դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների համալիր ծրագրի մշակում և իրականացում:

Բաժին 3. Սոցիալական արդարության սկզբունքի պահպանում կրթության ոլորտում

Կրթական քաղաքացիական նախաձեռնությունը գտնում է, որ ՀՀ կրթական նոր օրակարգի հիմքում անհրաժեշտ է դնել սոցիալական արդարության սկզբունքը: Հայաստանում սկսված համաժողովրդական շարժման հիմնական պատճառը մեր երկրում հաստատված և խորը արմատներ գցած սոցիալական անարդարությունն է: Ուստի շարժման արդյունքում իշխանության եկած քաղաքական ուժը պետք նախ և առաջ քայլեր ձեռնարկի այդ խնդրի լուծման ուղղությամբ: Ուստի պահանջում ենք.

- 3.1. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում նախատեսել տվյալների հավաքագրում սովորողների սոցիալական բնութագրիչների մասով:
- 3.2. Մշակել բարձրագույն կրթության համակարգում խոցելի խմբերի ներկայացվածության հայտանիշներ:
- 3.3. Մշակել սովորողների աջակցության առավել համակարգված մոտեցում, որը հիմնված կլինի ոչ թե առաջադիմության, այլ կարիքի վրա:
- 3.4. Մշակել դպրոցում կրկնուսուցման պահանջի նվազեցման ինտեգրված ռազմավարություն:
- 3.5. Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետությունն ու շարունակականությունը դիտարկվել բուհերի և սովորողների տեսանկյունից:
- 3.6. Վերանայել քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները:
- 3.7. Խթանել բոլորի համար կրթական հավասար հնարավորությունները հասարակության սոցիալական նորմերի խորաքննի ուսումնասիրության արդյունքում – կրթության սոցիալական չափումը բարելավելը ներառում է նաև սովորողների գենդերային (իգական և արական), ինքնության (սեռական, քաղաքական և կրոնական) և պատկանելության (սոցիալ- տնտեսական նկարագիր) տարբերությունների դրական ճանաչում և մշակութային հասկացում: Երկարաժամկետ կտրվածքում ցանկալի է, որ բարձրագույն կրթությունը ոչ թե արտացոլի հանրային նորմերը, այլ վերաթվարկյալ առումներով դերային տիպար դառնա հասարակության այլ հատվածների համար:
- 3.8. Կրթության բովանդակության մշակման մեջ ևս պահպանել սոցիալական արդարության սկզբունքը՝ համալիր բովանդակություն, քննադատական վերլուծության գործիքներ,

սոցիալական փոփոխության գործիքներ, բազմամշակութային խմբային դինամիկայի վերաբերյալ իրազեկվածություն, անհատական վերախմաստավորում:

ԿՔՆ-ն կարևորում է, որ նշված պահանջները համապատասխանաբար **ներառվեն նաև կարճաժամկետ և միջնաժամկետ ծախսերի ծրագրում**, Լիազոր մարմնի ֆինանսավորման որակական ինդիկատորներին վերաբերվող փաստաթղթերում և համապատասխանաբար ներդաշնակեցվեն:

ԿՔՆ-ն նաև կարևորում է, որ **կրթական քաղաքականությունը և կրթության ֆինանսավորումը կառուցվեն ցկյանս ուսումնառության հայեցակարգի շրջանակներում՝ հավասար և շարունակական կրթական հնարավորություններ տրամադրելով ՀՀ բոլոր քաղաքացիներին՝** անկախ տարիքից, սեռից, ազգային պատկանելությունից, հատուկ կարիքներից և բնակության վայրից:

Հանդիսանալով անկախ և ինքնակազմակերպման հիմունքներով գործող հարթակ, հարկ ենք համարում ընդձեռնել, որ **նշված փոփոխություններն ու վերադասավորումները կարող են հաջողություն ունենալ որոշումների կայացման բոլոր մակարդակներում մասնակցային խորհուրդների և գլխավոր շահառուի՝ Հայաստանի հասարակության ակտիվ ներգրավման պայմաններում:**

Կրթական քաղաքացիական նախաձեռնությունը ինչպես նախկինում, այնպես էլ հիմա հետևելու է Կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև կրթական կառույցների աշխատանքներին՝ նախաձեռնության կողմից որդեգրված սկզբունքներին համապատասխան, բացահայտելով և բարձրաձայնելով ոլորտում առկա խնդիրները, պահանջելով այդ խնդիրներին հնարավորինս արդյունավետ լուծումներ տալը, նպատակ հետապնդելով ապահովելու հանրության ամենալայն շերտերի ներգրավվածությունն ու ներկայացվածությունը կրթական համակարգի բարեփոխման գործընթացներում:

Կրթական քաղաքացիական նախաձեռնություն

10-ը մայիսի, 2018թ.

Հետադարձ կապ՝

Էլ. հասցե՝ krtakan2017@gmail.com

Ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/krtakan2017/>

Խնդիրների արձանագրման հարթակ՝ <https://iditord.org/education/>

ԿՔՆ ֆեյսբուքյան խումբ՝ <https://www.facebook.com/groups/1024700740995721/>

ԿՔՆ յութուբի ալիք՝ https://www.youtube.com/channel/UCZFowAth0j_UQjnw7A7I1uA